

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
14.05.2017 Թ.
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ
ԿԱՐԳՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ
ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ**

Պատրաստված


«Իրավունքի Եվրոպա միավորում»

իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից

«Քաղաքացի դիտորդ»

նախաձեռնության շրջանակներում

**ԵՐԵՎԱՆ
ՄԱՅԻՍ . 2018**



Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

Սույն զեկուցը կազմվել է «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից՝ վերջինիս կողմից իրականացված դիտորդական առաքելության արդյունքում:

Դիտորդական առաքելությունն իրականացվել է Եվրոպական միության ֆինանսավորմամբ և Ժողովրդավարության ազգային հիմնադրամի, Ժողովրդավարության ազգային ինստիտուտի և Թբիլիսիում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան համաֆինանսավորմամբ իրականացվող «2017 թ. խորհրդարանական ընտրությունների հանրային վերահսկողություն» ծրագրի շրջանակներում:

Ձեկույցի համար պատասխանատվություն է կրում «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպությունը:

Ձեկույցը որևէ ձևով չի արտացոլում Եվրոպական միության, Ժողովրդավարության ազգային հիմնադրամի և Ժողովրդավարության ազգային ինստիտուտի տեսակետերը:

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը ձևավորվել է 2013 թ.¹ նպատակ ունենալով վերահսկելու համապետական ու տեղական ընտրությունները Հայաստանում և դրանց համապատասխանությունը ներպետական օրենսդրությանն ու ժողովրդավարության միջազգային չափանիշներին: «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության կայքէջն է. <https://www.citizenobserver.am/>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	5
Բողոքների հիմքում ընկած խախտումները	6
Բողոքարկման գործընթացը	
Տարածքային ընտրական հանձնաժողովներում	32
Բողոքարկման գործընթացը	
Կենտրոնական ընտրական հանձնաժողովում	33
Բողոքարկման գործընթացը ՀՀ վարչական դատարանում	34
Բողոքարկման գործընթացը	
ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում	37

1. ՆԱԽԱԲԱՆ

14.05.2017թ. «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ նաև ԻԵՄ) «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում դիտորդական առաքելություն է իրականացրել Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ:

Դիտորդական առաքելության իրավաբանական թիմը դիտորդների դիտարկած և հաղորդած ընտրախախտումների առնչությամբ նախաձեռնել է բողոքարկման գործընթաց: 2017 թվականի մայիսի 14-ին և 15-ին ԻԵՄ-ի և վերջինիս դիտորդների կողմից 19 դիմում-բողոք է ներկայացվել Երևանում տեղակայված 10 տարածքային ընտրական հանձնաժողովներ (այսուհետ՝ նաև ՏԸՀ), որոնց մի մասը վերաբերել է ընտրական տեղամասերում, իսկ մյուս մասը՝ ՏԸՀ-ներում կատարված խախտումներին: Նշված բողոքները ներառել են ինչպես դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումներ, այնպես էլ ընդհանուր (օբյեկտիվ) ընտրական իրավունքի խախտումներ:

2. ԲՈՂՈՔՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ.

2.1. Դիտորդ Ա.Ա.-ն թիվ 3/1 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումները.

- 2.1.1. Տեղամասային կենտրոն պարբերաբար մուտք է գործել կողմնակի անձ և ուղղորդել/բերել է ընտրողների՝ ամեն անգամ պատճառաբանելով, որ բերում է իր բարեկամներին:
- 2.1.2. Ժամը 14:00-ի դրությամբ քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրած ցուցակում և տեխնիկական

սարքով գրանցված ընտրողների ընդհանուր թվերը տարբեր են եղել: Տարբեր է եղել նաև քվեարկությանը մասնակցած ընտրողների կողմից հանձնած քվեարկության կտրոնների թիվը:

- 2.1.3. Արդյունքների ամփոփման նիստի ժամանակ հանձնաժողովի քարտուղարն սկսել է լրացնել արձանագրություններն այն դեպքում, երբ քվեաթերթիկների տեսակավորումը դեռ ավարտված, իսկ քվեաթերթիկները՝ հաշվարկված չեն եղել: Դիտորդի դիտողությունից հետո խախտումը վերացվել է:
- 2.1.4. Ժամը 13:00-ից հետո «Մարզային նախաձեռնությունների և զարգացման կենտրոն» ՀԿ-ի տարբերանշան կրող դիտորդ Արամ Սարգսյանը պարբերաբար քվեարկությանը մասնակցող անձանց բերել է ընտրատեղամաս, ուղեկցել է մինչև քվեարկության սենյակ: Դիտորդը նաև լսել է հեռախոսագրույց, որի ընթացքում Արամ Սարգսյանն ինչ-որ մեկին ասել է. «Մարշրուտկա նստեցրեք ու սաղին բերեք»: Ժամը 14:30-ին Արամ Սարգսյանը դուրս է եկել տեղամասից:

2.2. Դիտորդ Գ.Գ-ն թիվ 3/25 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումները.

- 2.2.1. Վերջինիս դիտորդական իրավունքների խախտումները հետևանք են եղել քվեարկության սենյակի կահավորման կարգի խախտման, ինչի արդյունքում հանձնաժողովի անդամների սեղանները տեղադրված են եղել անմիջականորեն պատի տակ, որպեսզի դիտորդը զրկվի ընտրական գործընթացը համակողմանիորեն դիտարկելու հնարավորությունից:
- 2.2.2. Ժամը 8:30-ի սահմաններում թիվ 3/25 տեղամասային հանձնաժողովի անդամ Արման Մխիթարյանը խոչընդոտել է դիտորդի ազատ տեղաշարժը քվեարկության սենյակում:

Արման Մխիթարյանը նաև դիտորդին արգելել է կանգնել քվեատուփի մոտ և դիտարկել իր աշխատանքները՝ նշելով, որ դիտորդը տեղաշարժվելու իրավունք չունի: Հանձնաժողովի նախագահ Վանիկ Մանվելյանը տեղեկացվել է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն որևէ գործողություն չի ձեռնարկվել: Դիտորդը պահանջել է գրանցել խախտումը/խախտման վերաբերյալ իր գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, սակայն Հանձնաժողովի նախագահը մերժել է: Ժամեր անց՝ 12:00-ի սահմաններում դիտորդի հետ կապ է հաստատել ԿԸՀ-ի Լիլյա անունով աշխատակիցը և հորդորել ամեն խախտում սրտին մոտ չընդունել և արձանագրություն չկազմել, փորձել կարգավորել խնդիրը տեղամասային հանձնաժողովի անդամների հետ: Այն բանից հետո, ինչ դիտորդն ասել է, որ հանձնաժողովի նախագահը որևէ քայլ չի ձեռնարկել խախտումը վերացնելու ուղղությամբ, ԿԸՀ աշխատակիցը խոսել է տեղամասային հանձնաժողովի նախագահի հետ, որից հետո վերջինս արձանագրություն է կազմել դիտորդի անունից, որը վերջինս չի ստորագրել՝ դիտորդի կողմից արձանագրված խախտման բովանդակությանը մասամբ համաձայն չլինելու պատճառով:

2.2.3. Ներկա դիտորդներից մեկն ինքն է հանել քվեաթերթիկները քվեարկության ծրարներից: Գ.Գ.-ի դիտողությանն ի պատասխան հանձնաժողովի նախագահն ասել է, որ այդպես ավելի արագ կընթանա քվեարկության արդյունքների ամփոփման նիստը: Երբ դիտորդը պահանջել է գրանցել խախտումը գրանցամատյանում, քվեարկության ծրարները բացող և քվեաթերթիկները տեսակավորող դիտորդը փոխարինվել է հանձնաժողովի անդամներից մեկով, իսկ վերոնշյալ դիտորդը նստել է հանձնաժողովի անդամներից մեկի կողքին և իր մոտ հավաքել քվեաթերթիկների տրցակներից մեկը: Նույն դիտորդը մինչև վերջ մնացել է

ընտրական տեղամասում և օգնել տեղամասային ընտրական հանձնաժողովին կատարել իր աշխատանքները (առկա է նաև տեսանյութ):

2.3. Դիտորդ Ա.Զ.-ն 4/8 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումը.

2.3.1. Ժամը 10:15 սահմաններում Թաշյան Անժելա անունով մի կին եկել է տեղամաս՝ որպես օգնող տարեց մի տղամարդու քվեարկելուն օգնելու նպատակով, քանի որ վերջինս տեսողության խնդիր է ունեցել: Տարեց մարդու անձնագիրը սարքով անցկացնելուց հետո կինը տվել է նաև իր անձնագիրը: Սարքի էկրանին վառվել է կարմիր նշանը, պարզվել է, որ նա արդեն քվեարկել է: Օգնող կնոջ վարկածի համաձայն՝ նա ըստ մասնագետի պահանջի է շփոթված տվել անձնագիրը: Գրանցամատյանում դեպքը գրանցվել է, սակայն որպես պատահականություն:

2.4. Դիտորդ Ա.Զ.-ն թիվ 4/6 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումները.

2.4.1. Դիտորդը ժամը 17:22 ռոպեին ներկայանալով տեղամաս՝ հայտնաբերել է, որ հանձնաժողովի անդամներից 3-ը, ովքեր պետք է նշված ժամին, ըստ գրանցամատյանի, իրականացնեին կոնկրետ գործառույթներ, տեղում չեն եղել: Գրանցամատյանում գրանցված չի եղել, որ նրանց որևէ այլ անդամ այդ պահին փոխարինել է:

2.4.2. Թիվ 4/6 տեղամասի 3 քվեախցիկներից մեկը տեղակայված է եղել այնպես, որ դրա հետնամասում ազատ տարածություն է եղել, այլ սենյակ (բաց), ընդ որում՝ այդ տարածքում անցուդարձ է եղել:

- **1. Դիտորդ Լ.Գ.-ն 4/1 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումները.**

1.1. Ընտրողների ցուցակում առկա են եղել մահացած անձի տվյալներ:

1.2. Ժամը 8:10-ից «Քարավան 88» ՀԿ-ի դիտորդ Վարդան Հակոբյանն անընդհատ խոչընդոտել է քվեարկության բնականոն ընթացքը, իրականացրել է դիտորդական առաքելության շրջանակներից դուրս գործողություններ. մասնավորապես՝ մոտեցել է ընտրողներին, բարևել, հարցրել նրանց քվեարկության կտրոնների համարները, այնուհետև՝ ուեկցել քվեաթերթիկների հատկացման համար պատասխանատու հանձնաժողովի անդամների մոտ: Նույն անձը պարբերաբար մոտեցել է «89QD009» պետհամարանիշով մեքենային և վերադարձել տեղամաս: Ավելին, քվեարկությունը սկսվելուց մոտ կես ժամ անց տեղամասում արձանագրվել է ընտրողների մեծ հոսք: Վերջիններս շարունակաբար մոտեցել են «Քարավան 88» և «Կրթական և մշակութային կամուրջներ» ՀԿ-ների տարբերանշաններ կրող դիտորդներ Վարդան Հակոբյանին և Հայկ Վարդանյանին, ողջունել նրանց, զրուցել և միայն հետո մտել քվեախցիկ: Նշված անձանց հետ քվեարկությունից հետո ընտրողները հաղորդակցվել են նաև տեղամասի բակում: Առկա է գրավոր արձանագրություն մատնանշված խախտումների վերաբերյալ, որը ստորագրել է նաև «Ելք» դաշինքի վստահված անձը: Հանձնաժողովի նախագահը տեղեկացված է եղել խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն որևէ գործողություն Հանձնաժողովի նախագահի կողմից չի ձեռնարկվել: Խախտումը դիտորդի կողմից գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում՝ հանձնաժողովի նախագահի կողմից անհիմն խոչընդոտներ ստեղծելուց հետո միայն:

1.3. Քվեարկության սենյակի կողքին առկա է եղել բաց դռներով սենյակ, որտեղ պարբերաբար ելումուտ են արել

հանձնաժողովի անդամները, վստահված անձինք, «Քարավան 88» ՀԿ-ի դիտորդ Վարդան Հակոբյանը: Հանձնաժողովի նախագահը տեղեկացված է եղել խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն որևէ գործողություն չի ձեռնարկվել: Հանձնաժողովի նախագահը պարզաբանում է տվել առ այն, որ «քվեասենյակին կից սենյակը հատուկ տրամադրված սենյակ է, որի համար հանձնաժողովի նախագահն անձամբ վճարել է հանձնաժողովի անդամների ու վստահված անձանց ընդմիջումը կազմակերպելու համար»: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է փակել այդ սենյակի դուռը՝ ասելով, որ «կփակի միայն այն ժամանակ, երբ դիտորդի կողմից կմատնանշվի ՀՀ ընտրական օրենսգրքի համապատասխան հոդվածը, որի համաձայն՝ իրենց արգելվում է քվեասենյակին կից ունենալ օժանդակ սենյակ, որտեղ իրենք ազատ ելումուտ կանեն:

• **2. Դիտորդ Ն.Հ.-ն թիվ 2/12 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումները.**

2.1. Տեղամասում առկա է եղել քարոզչայնությամբ ընտրություններին մասնակցող կուսակցություններից մեկի՝ ՀՀԿ-ի նախագահ Սերժ Սարգսյանի լուսանկարի տեսքով:

2.2. Ժամը 07:15-ին տեղամասում տեղի է ունեցել հանձնաժողովի անդամների գործառույթների վիճակահանություն, որին, սակայն, ներկա չի գտնվել հանձնաժողովի անդամներից մեկը՝ Արշակ Գևորգյանը: Նրա փոխարեն վիճակահանության թերթիկները հանել է հանձնաժողովի նախագահը: Հանձնաժողովի նախագահը տեղեկացված է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վե-

րացնել խախտումը: Վերջինիս պնդմամբ, նա կապվել է Ա. Գևորգյանի հետ հեռախոսակապի միջոցով: Խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

- 2.3. Տեղամաս են եկել մի կին և մի տղամարդ: Երբ վերջիններս արդեն գտնվել են քվեախցիկում, տղամարդը նայել է, թե ինչպես է քվեարկել կինը և դրանից հետո նոր գնացել քվեարկության:
- 2.4. Տեղամասում պարբերաբար (ժամը 7:45-ի սահմաններում, 13:00-ի սահմաններում) գտնվել է մի քաղաքացի, որը որևիցե կարգավիճակ չի ունեցել: Հանձնաժողովի նախագահը տեղեկացված է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն վերջինս որևէ գործողություն չի ձեռնարկել, պատճառաբանելով, որ անձը գտնվում է միջանցքում, այլ ոչ թե քվեարկության սենյակում:
- 2.5. Տեղամասում գտնվել է մի քաղաքացի, որն ուղղորդել է ընտրողներին: Հետագայում այդ անձը գրանցվել է որպես Արտաշես Վլադիմիրի Կիրակոսյան՝ «Գեղամա երիտասարդական տարածքային ասոցիացիայի» ՀԿ-ի դիտորդ: Ընտրությունների ողջ ընթացքում վերոհիշյալ անձն ուղեկցել է ընտրողներին տեղամաս, մոտեցել տեղամասում գտնվող ընտրողներին, զրուցել վերջիններիս հետ՝ ուղղորդելով քվեարկել 3-րդ համարի օգտին: Առկա է տեսանյութ և լուսանկարներ:
- 2.6. Տեղամասում պարբերաբար կատարվել է քվեարկության նկատմամբ վերահսկողություն: Մասնավորապես, մի քաղաքացի (դիտորդին հաջողվել է պարզել, որ վերջինս թիվ 187 դպրոցի (տեղամասի գտնվելու վայրի) փոխտնօրենն

է), օրվա ընթացքում պարբերաբար մոտեցել է հանձնաժողովի անդամներին և ճշտել այդ պահի դրությամբ ընտրություններին մասնակցած անձանց թիվը: Առկա է լուսանկար: Մեկ անգամ նույն գործողությունը կատարել է նաև վերոնշյալ դպրոցի տնօրենը:

3. Դիտորդ Վ.Գ-ն թիվ 9/22 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումները.

- 3.1. Ժամը 8:20-ի սահմաններում անհայտ անձը, որը ձեռքին ունեցել է ինչ-որ տարբերանշան (բեյջ), հարվածել է դիտորդի տեսախցիկին և արագ հեռացել տեղամասից: Դիտորդը նկարել է անձի դեմքը: Հանձնաժողովի նախագահը տեղեկացված է խախտման մասին, սակայն որևէ գործողություն չի ձեռնարկել: Հանձնաժողովի նախագահը հրաժարվել է հայտնել, թե արդյոք գրանցված է նշված անձը գրանցամատյանում թե ոչ և ով է նա:
- 3.2. Ժամը 8:30-ի սահմաններում տեխնիկական սարքի մասնագետը հարվածել է դիտորդի տեսախցիկին, օբյեկտիվը հեռացրել իր ուղղությունից՝ այդպիսով խոչընդոտելով դիտորդի նկարահանմանը:
- 3.3. Ժամը 8:50-ի սահմաններում հանձնաժողովի անդամ Արթուր Շիրինյանը հայիոյել է դիտորդին՝ ասելով «սիկտիր»:
- 3.4. Ժամը 09:00-ի սահմաններում, երբ դիտորդը գրանցամատյանում գրանցելիս է եղել իր գնահատականը հանձնաժողովի անդամի կողմից իրեն հայիոյելու կապակցությամբ, տեղամասում վստահված անձ գրանցված անձը Կուլյանոսյան ազգանունով հանձնաժողովի քարտուղարին ասել է, որ դիտորդը հայ չէ, պարսիկ է՝ ակնհայտ նպատակ ունենալով նսեմացնել դիտորդի անձը:
- 3.5. Թիվ 9/22 և 9/23 տեղամասերի մերձակայքում 7:30-ի սահմաններում մոտ մեկ, մեկուկես ժամ կայանած է եղել

ավտոմեքենա: Հանձնաժողովի նախագահը մոտեցել է վարորդին խնդրելու, որ հեռացնի մեքենան, բայց վերջինս չի հեռացրել մեքենան:

- 3.6. Թիվ 9/22 և 9/23 տեղամասերի դիմաց ժամը 08:15-ի սահմաններում մոտ 5-6 մետր հեռավորության վրա հավաքված են եղել անհայտ անձինք:
- 3.7. Ժամը 12:30-ի սահմաններում 9/23 տեղամասում գրանցված Կուլյանոսյան ազգանունով վստահված անձը, օգտվելով իրավիճակից (ոչ ոք չէր տեսնում), 9/22 և 9/23 տեղամասերի տեղակայման շենքի դռնով հարվածել է դիտորդի մեջքին: Արդյունքում դիտորդը, գանգատելով մեջքի ցավից (նա մինչ այդ էլ ունեցել է մեջքի վնասվածք, որի հետևանքով նրա մոտ պարբերաբար առկա ցավը սրվել է), հեռացել է տեղամասից և հնարավորություն չի ունեցել շարունակելու դիտորդությունը:
- 4. **Դիտորդ Ժ/Ս-ն թիվ 9/16 տեղամասում դիտարկել է, որ քվեախցիկների մոտ գտնվող պատի վրա փակցված է եղել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նկարը, որը, հաշվի առնելով, որ վերջինս գլխավորում է ավագանու ընթացող ընտրությանը առաջադրված կուսակցությունը՝ ՀՀԿ-ն, հանդիսանում էր առերևույթ քարոզչանյութ:**
- 5. **Դիտորդ Լ.Բ.-ն թիվ 7/29 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումները.**

5.1. Ժամը 08:15-ի և 09:00-ի սահմաններում դիտորդը դիմել է հանձնաժողովի նախագահին իրեն գրանցամատյանը (դրա՝ տեղամասում գրանցված անձանց անունների էջը) լուսանկարելու իրավունք ընձեռելու պահանջով, սակայն հանձնաժողովի նախագահը երկու անգամն էլ հրաժարվել է ապահովել այդ հնարավորությունը՝ պատճառաբանելով, որ դիտորդն իրավունք ունի բացառապես քաղվածքներ ու պատճեններ անելու:

5.2. Ժամը 11:20-ի դրությամբ արդեն երկրորդ անգամ բացահայտվել է դեպք, երբ հանձնաժողովի կին անդամը, երկու քվեաթերթիկ է տվել ընտրողներին, ընդ որում՝ երկրորդ դեպքում դիտորդը նկատել է, որ քվեաթերթիկն արդեն իսկ լրացված է, քվեարկած, սակայն չի նկատել, թե ում օգտին: Ընտրողների կողմից իրենց երկու քվեաթերթիկ տալու դեպքերը բարձրաձայնելուց հետո հանձնաժողովի անդամը, որը դրանք բաժանել է, ժեստերով փորձել է հասկացնել ընտրողներին, որպեսզի դեպքերը չբարձրաձայնեն: Հանձնաժողովի նախագահն իր հերթին երկու դեպքում էլ վերցրել է քվեաթերթիկները և ավելորդները պատռել: Հանձնաժողովի այն անդամը, որը տրամադրել է այդ քվեաթերթիկները հրաժարվել է ներկայանալ և թաքցրել է վկայականը, սակայն դիտորդը լուսանկարել է վերջինիս: Հետագայում դիտորդը պարզել է հանձնաժողովի անդամի անունը՝ Գրիգորյան Նվարդ:

- 5.3. Անձը ստորագրել է մեկ այլ ընտրողի տողում՝ վերջինիս փոխարեն: Դեպքը բացահայտվելուց հետո հանձնաժողովի անդամը սլաք է տարել նշված տողից դեպի ընտրողի իրական տողը:
- 5.4. Ժամը 14:35-ի սահմաններում ընտրողը լուսանկարել է քվեաթերթիկը: Վերջինիս նոր ծրար և քվեաթերթիկներ են տրամադրվել:
- 5.5. Ժամը 15:00-ի սահմաններում կողմնակի անձինք իրականացվել է ուղղորդում. մոտավորապես 30 բոպեի ընթացքում նրանք երկու-երեք խումբ քաղաքացիների են բերել քվեարկելու: Հանձնաժողովի նախագահը դուրս է հանել ուղղորդման կազմակերպիչներին:
- 5.6. Ժամը 16:50-ի սահմաններում թիվ 7/29 տեղամասի հանձնաժողովի անդամը գտնվել է 7/28 տեղամասում՝ հանձնաժողովի այլ անդամի կողքին: Դիտորդի այն հարցին,

թե ինչ գործառույթ է իրականացնում այդ պահին, չի պատասխանել և հեռացել է: Քիչ անց վերադարձել է: Վերադառնալով 7/29 տեղամաս, դիտորդը պարզել է, որ հանձնաժողովի հիշյալ անդամը տվյալ ժամանակամիջոցում պատասխանատու է եղել քվեատուփի և ինքնասունձվող դրոշմանիշերի համար: Հանձնաժողովի անդամի անունը և ազգանունը ճշտել չի հաջողվել, վերջինս հրաժարվել է ներկայանալ: Դիտորդը խախտումը/խախտման մասին գնահատականը գրանցամատյանում գրանցելու հնարավորություն չի ունեցել, քանի որ հանձնաժողովի նախագահը վերցրած է եղել գրանցամատյանը և այլ վայրում պատասխանելիս է եղել ոստիկանների հարցերին՝ ըստ դիտորդին հայտնված տեղեկությունների՝ երկու լրացուցիչ քվեաթերթիկների տրամադրման դեպքի կապակցությամբ: Հանձնաժողովի նախագահի տեղամաս վերադառնալուն պես, դիտորդը պահանջել է գրանցել խախտումը/խախտման մասին գնահատականը, սակայն հանձնաժողովի նախագահը չի ապահովել գրանցումը, պատճառաբանելով, թե հանձնաժողովի անդամը մյուս տեղամաս գնացել է զուգարանից օգտվելու համար: Թիվ 7/29 տեղամասում ևս առկա է եղել զուգարան:

5.7. Գրանցամատյանում հանձնաժողովի անդամների հերթափոխի վիճակահանության արդյունքների գրանցման էջում նշված չեն հանձնաժողովի անդամների անուն, ազգանունները՝ միայն անհատական կնիքներով են կնքված համապատասխան տողերը:

5.8. Ժամը 20:17-ի դրությամբ ամփոփման նիստի ժամանակ հանձնաժողովի անդամների անհատական կնիքները չեն հավաքվել, սկզբում տպվել է տեխնիկական սարքի միջոցով ամփոփիչ տեղեկանքը, հաշվարկվել են կտրոնները:

● **6. Դիտորդ Ա.Բ.-ն թիվ 7/33 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումը.**

6.1. Ժամը 20:30-ի սահմաններում մինչև քվեարկության մասնակիցների թիվը հաշվարկելը, տեխնիկական սարքի միջոցով արդեն տպվել է ամփոփիչ տեղականքը և հավաքվել են սարքավորումները:

● **7. Դիտորդ Ա.Մ.-ն թիվ 7/43 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումները.**

7.1. Վերջինիս՝ որպես դիտորդի իրավունքների խախտումները դրսևորվել են տեղամասային հանձնաժողովի հետևյալ գործողություններով (անգործությամբ). Դիտորդին 7.40-8.00 արգելվել է ընտրողների գրանցման տեխնիկական սարքավորումը հետնամասի կողմից դիտարկելու, համապատասխան հատվածում ազատ տեղաշարժվելու և լուսանկարելու իրավունքի իրականացումը: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն նախագահն ստեղծել է անհիմն խոչընդոտներ: Դիտարկումը թույլատրվել է միայն Նախագահի կողմից հեռախոսազանգով ճշտումներ կատարելուց հետո, խախտումը գրանցամատյանում ևս գրանցվել է Նախագահի կողմից անհիմն խոչընդոտներ ստեղծելուց հետո: Գրանցամատյանի համապատասխան էջը լուսանկարելու դիտորդի իրավունքը ևս որոշ ժամանակահատված սահմանափակվել է և թույլատրվել է միայն Նախագահի կողմից հեռախոսազանգով ճշտումներ կատարելուց հետո: Արդյունքում խախտվել են նաև դիտորդի՝ « ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ իրավունքները:

7.2. Քվեարկող տարեց կինը մոտեցել է քվեատուփին՝ դրա մեջ քվեարկության ծրարը նետելու նպատակով: Նրա մոտ բացի քվեարկության ծրարում առկա քվեաթերթիկից եղել է նաև երկրորդ քվեաթերթիկ, որը նա փորձել է դուրս հանել տեղամասային կենտրոնից: Քվեարկության ծրար

րում առկա քվեաթերթիկը եղել է ՀՀԿ-ի օգտին: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն որևէ գործողություն չի ձեռնարկվել: Դիտորդը պահանջել է գրանցել խախտումը/խախտման վերաբերյալ իր գնահատականը տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում: Հանձնաժողովի նախագահը փորձել է համոզել, որ այս անգամ չարձանագրեն, քանզի սխալ է տեղի ունեցել, և քվեարկողին ավելորդ քվեաթերթիկ է տրամադրվել: Առաջարկել է արձանագրել որպես խախտում, եթե երկրորդ անգամ նման բան կրկնվի: Դիտորդի բազմակի պնդումներից հետո խախտումը գրանցվել է գրանցամատյանում: Ի պատասխան դրան՝ հանձնաժողովի նախագահը և քարտուղարը փորձել են կազմել մեկ այլ արձանագրություն: Հանձնաժողովի քարտուղարը դուրս է եկել քվեարկության սենյակից: Վերադարձել է գրված արձանագրությամբ, որում նշված է, որ երկրորդ քվեաթերթիկը տրամադրվել է ընտրողին հանձնաժողովի անդամի կողմից պատահաբար:

- 7.3. Քվեախցիկի ներսում գտնվել է չօգտագործված քվեաթերթիկ: Քվեարկողն ասել է, որ այդ քվեաթերթիկը եղել է ներսում, երբ նա մտել է քվեախցիկ:
- 7.4. Քվեարկության արդյունքների ամփոփման նիստի ժամանակ արձանագրվել է, որ ընտրողների ցուցակում գրանցված քվեարկության մասնակցած ընտրողների թիվը չի համապատասխանում տեխնիկական սարքով գրանցված ընտրողների թվին: Խախտումը գրանցվել է գրանցամատյանում:
- 7.5. Քվեարկության արդյունքների ամփոփման նիստի ժամանակ դիտորդն արձանագրել է, որ քվեարկության չորս ծրարների մեջ եղել է երկուական քվեաթերթիկ, որոնցից

յոթը ՀՀԿ-ի օգտին, իսկ մեկը եղել է դատարկ: Քվեարկության ծրարներից մեկի մեջ թղթի կտոր է դրված եղել: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին: Խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը գրանցվել է գրանցամատյանում:

7.6. Քվեարկության արդյունքների ամփոփման նիստի ժամանակ դիտորդն արձանագրել է, որ թվով 58 քվեաթերթիկների վրա նշումը կատարված է եղել կարմիր գրիչով, թվով 27 քվեաթերթիկ ունեցել է կանաչ նշում, թվով 29 քվեաթերթիկ ունեցել է սև նշում և 3 քվեաթերթիկ նշված է եղել նարնջագույն գրիչով: Բոլոր նշված քվեաթերթիկները քվեարկված են եղել ՀՀԿ-ի օգտին:

● **8. Դիտորդ Ն.Մ.-ն թիվ 10/53 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումները.**

8.1. Ժամը 07:30-ի սահմաններում հանձնաժողովը վիճակահանությունն իրականացրել է հանձնաժողովի անդամներից մեկի բացակայությամբ: Վիճակահանության արդյունքներով հանձնաժողովի անդամների միջև բաշխվել են գործառնությունները, իսկ հետագայում արդեն ներկայացած հանձնաժողովի անդամին վիճակահանության արդյունքով հանձնարարվել է թիվ 2 ցուցակի վարումը 08:00-ից մինչև 10:00-ն ընկած ժամանակահատվածում, սակայն վերջինիս տեսողության հետ կապված խնդիրների պատճառաբանությամբ, թիվ 2 ցուցակի վարումը հանձնարարվել է հանձնաժողովի այլ անդամի, իսկ հանձնաժողովի տվյալ անդամը տեղափոխվել է այլ տեղ: Հանձնաժողովի նախագահը տեղեկացվել է խախտման մասին և նրան առաջարկվել է ձեռնարկել համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերացնել խախտումը, սակայն որևէ գործողություն չի ձեռնարկվել: Խախտման վերաբերյալ գնահատականն, ի սկզբանե չի գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում և միայն

հետագայում՝ 09:30-ի սահմաններում, գրանցամատյանում կատարվել է գրառում:

- 8.2. Քվեարկության սենյակում տեղադրված քվեախցիկների անմիջապես հետևում առկա է եղել դիտանցքով դուռ, որի պայմաններում հնարավոր է եղել քվեախցիկում քվեարկող անձանց գործողությունների վերահսկողություն:
- 8.3. Ժամը՝ 08:00-ից 08:30-ն ընկած ժամանակահատվածում անձը ներկայացել է տեղամաս, գրուցել ՀՀ-ի վստահված անձի հետ, իսկ ի պատասխան դիտորդի կողմից հանձնաժողովի քարտուղարին ուղղված հարցադրմանը, թե ով է տվյալ անձնավորությունը, հանձնաժողովի քարտուղարը հայտնել է, որ ՀՀ-ից է: Այնուհետև, նշված անձը հեռացել է տեղամասից և որոշ ժամանակ անց վերադարձել արդեն դիտորդի վկայականով: Դիտորդը, մոտենալով այդ անձին, խնդրել է հայտնել, թե որ դիտորդական կազմակերպությանն է վերջինս ներկայացնում, սակայն նշված անձը չի կարողացել պատասխանել և փորձել է ընթերցել կազմակերպության անվանումը վկայականից: Նրա անունը եղել է Արամ Ադամյան, որը ներկայացրել է «Գեղամա երիտասարդական տարածքային ասոցիացիա» ՀԿ-ն: Դիտորդը հետաքրքրվել է նաև հանձնաժողովի քարտուղարից, թե ինչպես է ՀՀ-ի ներկայացուցիչը հանդես գալիս դիտորդի կարգավիճակով, ինչին ի պատասխան քարտուղարը ժխտել է նախկինում իր ասածը՝ նշելով որ այդ անձը դիտորդ է և որպես դիտորդ տվյալ պահին գրանցամատյանում կատարում է համապատասխան գրանցում:
- 8.4. Ժամը՝ 09:30-ից 10:00-ի սահմաններում ՀՀ-ի վստահված անձը միջանցքում գրուցել է մի կնոջ հետ: Դիտորդի ուշադրությունը գրավելուց հետո վերջիններս ցածրաձայն են շարունակել իրենց խոսակցությունը: Այնուհետև, վստահված անձը մոտեցել է դիտորդին և ասել. «ինչքան

խելոք մնաս ու չխառնվես անձնական հարցերին, այնքան ավելի լավ կլինի քո համար»: Դիտորդը հակադարձել է՝ նշելով որ որևէ անձնական հարցի ինքը չի խառնվում, այլ դիտարկում է ընտրական գործընթացում տեղի ունեցող իրադարձությունները: Հետագայում, նշված կինը փոխարինել է մինչ այդ որպես դիտորդ հանդես եկող Արամ Ադամյանին: Կնոջ անունը Քրիստինե Ալեքսանյան է եղել և նա նույնպես հանդես է եկել վերոնշյալ հասարակական կազմակերպության անունից:

- 8.5. Քաղաքացին մուտք է գործել ընտրատեղամաս, մոտեցել հանձնաժողովի անդամներին, գրուցել վերջիններիս և ներկա գտնվողների հետ (վերջինս չի հանդիսացել տվյալ տեղամասի ընտրող): Դիտորդը փորձել է հանձնաժողովի անդամներից ճշտել, թե ով է նշված անձը, ինչին ի պատասխան դիտորդին հայտնել են, որ ինքը կարող է մոտենալ այդ անձին և ինքնուրույն ճշտել, թե ով է նա: Դիտորդը մոտեցել է նրան և պարզել, որ վերջինս ՀՀ-ի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու թեկնածու, Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավար Արթուր Կիրակոսյանն է: Դիտորդի պահանջով վերոնշյալ փաստն արձանագրվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից:
- 8.6. Ժամը՝ 09:30-ից 10:00-ի սահմաններում դիտորդը դուրս գալով ընտրատեղամասից, արձանագրել է, թե ինչպես են միկրոավտոբուսով ընտրատեղամաս տեղափոխվում ընտրողներ: Դիտորդը սկսել է տեսանկարահանել, այնուհետև, երբ միկրոավտոբուսից դուրս եկած անձինք մտել են ընտրատեղամաս, դիտորդը մոտեցել է միկրոավտոբուսին, որտեղ գտնվելիս են եղել վարորդը և մի կին, որի մոտ եղել են նաև ցուցակներ: Դիտորդը փորձել է նաև հետաքրքրվել, թե որտեղից է շարժվել միկրոավտոբուսը և ուր է հետագայում շարժվելու: Արդյունքում պարզվել է, որ այն շարժվելու է դեպի Նուբարաշեն: Դիտորդը

հետաքրքրվել է նաև, թե այդ ինչ ցուցակներ են գտնվում կնոջ ձեռքին, ինչից հետո կինը փորձել է պահել ցուցակները՝ ասելով, որ դրանք իր ցուցակներն են: Այդ պահին դիմացի հատվածում գտնվող ընտրատեղամասից ՀՀԿ-ի վստահված անձը, դիմելով կնոջը, բացական է, թե ինչու է նա թույլ տալիս, որ իրեն նկարահանեն, որից հետո կինն սկսել է բղավել և սպառնալ՝ պահանջելով դիտորդից ջնջի տեսանյութը և սպառնալով, որ եթե տեսանյութն ինչ-որ տեղում հայտնվի, ապա դիտորդը «կփռշմանի և իրենից չի պրծնի»:

8.7. Ոստիկանության աշխատակիցը երկու ժամը մեկ մոտեցել է հանձնաժողովի նախագահին՝ պահանջելով իրեն տրամադրել քվեարկությանը մասնակցած անձանց թվաքանակն այդ պահի դրությամբ: Դիտորդը պահանջել է պարզաբանել, թե ինչի հիման վրա են ոստիկանության աշխատակցին տրամադրվում նման տվյալներ, ինչին ի պատասխան հանձնաժողովի նախագահը հայտնել է, որ ոստիկանության աշխատակիցն իրավունք ունի պահանջելու և ստանալու նման տվյալներ իր վերադասին զեկուցելու նպատակով:

8.8. Ժամը 16:10-ի սահմաններում Դիտորդն արձանագրել է, թե ինչպես է հանձնաժողովի անդամներից մեկը լուսանկարահանում ընտրողների ցուցակը: Հանձնաժողովի անդամը, տեսնելով, որ Դիտորդը նկատել է լուսանկարահանելու գործընթացը, դադարեցրել է լուսանկարահանումը՝ պատճառաբանելով որ ինքը ոչ թե լուսանկարահանում է ընտրողների ցուցակը, այլ «սելֆի» է անում:

● **9. Դիտորդ Ռ.Ա.-ն թիվ 5/1 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումները.**

9.1. Առավոտյան 11:10-ի սահմաններում ՀՀԿ-ի վստահված անձը քվեարկության կարգը բացատրելու պատրվակով մինչ քվեարկության խցիկ մտնելն ուղղորդել է ընտրողին:

9.2. Առավոտյան ժամը 11:46-ի սահմաններում 5/1 տեղամասի դիմաց դիտորդը նկատել է մեքենաների կուտակումներ:

● **10. Դիտորդ Ք.Ա.-ն թիվ 5/7 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումները.**

10.1. Առավոտյան ժամը 09:00-ի սահմաններում մի տարեց կին տեղամաս է մտել ՀՀԿ-ի օգտին նախապես քվեարկած քվեաթերթիկի ձևանմուշով:

10.2. 16:50-ի սահմաններում ոստիկանության աշխատակիցներ են եկել տեղամաս և գրանցամատյանը վերցրել զննության համար, այնուհետև հանձնաժողովի նախագահից բացատրություն վերցնելու նպատակով գրանցամատյանի հետ միասին տեղափոխվել են այլ սենյակ: Դիտորդը փորձել է ճշտել, թե ինչ նպատակով և որտեղ է գտնվում գրանցամատյանը, ինչպես նաև պահանջ է ներկայացրել, որպեսզի այն վերադարձվի տեղամաս, ինչին ի պատասխան քարտուղարը հայտնել է, որ դիտորդի պատճառով խառնաշփոթ է առաջացել, ինչի հետևանքով դատախազությունն է եկել գրանցամատյանը ստուգելու (նշված ձևակերպումը քարտուղարինն է) նպատակով: Դիտորդը պահանջել է վերոնշյալ խախտման փաստն արձանագրել տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, սակայն քարտուղարը հրաժարվել է գրանցել խախտումը պատճառաբանելով, որ իմաստազուրկ է այդ խախտումը գրանցել, քանի որ ոստիկանությունը բացատրություն վերցնելիս արդեն իսկ իր մոտ արձանագրել է, թե գրանցամատյանը երբ է բացակայել տեղամասից և ինչ գործողություններ են կատարվել: Արդյունքում խախտվել են նաև ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված դիտորդի իրավունքները:

• **11. Դիտորդ Մ.Ա.-ն թիվ 6/3 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումները.**

11.1. ««Գեղամա» երիտասարդական տարածքային ասոցիացիա» հասարակական կազմակերպության դիտորդ Գեղամ Վիլենի Սուքիասյանն առավոտյան ժամը 8:00-ից սկսած մինչև 11:30-ն իրականացրել է ընտրողների ուղղորդում: Ուղղորդման, ինչպես նաև դիտորդի իրավունքների սահմանափակման վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվել է citizenobserver.am կայքում, որից հետո հանձնաժողովի նախագահն իր նախաձեռնությամբ խախտումը/խախտման վերաբերյալ գնահատականը գրանցել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

11.2. ««Գեղամա» երիտասարդական տարածքային ասոցիացիա» հասարակական կազմակերպության դիտորդ Գեղամ Վիլենի Սուքիասյանը հոգեբանական ճնշում է գործադրել Մանե Սահակյանի նկատմամբ, ինչպես նաև վերջինիս հասցեին հնչեցրել վիրավորական արտահայտություններ («էս Չակունն ով ա, էսիմ որ գեղից եկելա ինչա հասկանում», «այ Չակուն, գնա ձեր գեղը», «գեղ-ցի», «բայց կգրես, որ դա Չակունի կարծիքնա»), իսկ հանձնաժողովի անդամը փորձել է վախեցնել՝ ասելով. «... էն ինչ-որ ասում ես կարող է շուռ գալ քո դեմ»: Հնչեցված վիրավորանքների և սպառնալիքների վերաբերյալ առկա է ձայնագրություն:

11.3. Ժամը 14:30-ի սահմաններում տեղամաս են մուտք գործել քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձինք: Վերջիններս վերնազգեստի վրա չեն կրել վկայական (առկա է տեսաձայնագրություն):

11.4. Արդյունքների ամփոփման նիստի ավարտին հանձնաժողովի նախագահը դիտորդին թույլ չի տվել լուսանկարահանել գրանցամատյանը:

• **12. Դիտորդ Ռ.Վ.-ն թիվ 6/14 և 6/15 տեղամասերում դիտարկել է հետևյալ խախտումները.**

12.1. Քվեատուփերը 18:30 դրությամբ կապարակնքված չեն եղել (առկա են լուսանկարներ):

• **13. Դիտորդ Կ.Ա.-ն թիվ 6/42 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումները.**

13.1. Հանձնաժողովի նախագահն արգելել է դիտորդին ներկա գտնվել քվեաթերթիկներ հատկացնող անդամի կողքին (նստել վերջինիս կողքին) և դիտարկել քվեաթերթիկների հատկացման գործընթացը, մասնավորապես, ասելով. “հետաքրքիր բան չկա այստեղ, վեր կաց”: Դիտորդը ստիպված է եղել տեղափոխվել քվեարկության սենյակի այլ հատված: Մոտ հինգ թույլ անց դիտորդը նորից վերադարձել է քվեաթերթիկներ հատկացնող անդամի մոտ (նստել վերջինիս կողքին), իսկ Հանձնաժողովի նախագահը կրկին փորձել է սահմանափակել դիտորդի՝ քվեարկության սենյակում ազատ տեղաշարժվելու և քվեաթերթիկների հատկացման գործընթացը դիտարկելու իրավունքը: Հանձնաժողովի քարտուղարի միջամտությունից հետո դիտորդի իրավունքների խոչընդոտումը կասեցվել է:

13.2. Երկու քվեաթերթիկների դեպքում ակնհայտորեն խախտված է եղել նշում կատարելու սահմանված ձևը (մի դեպքում նշումը կատարված է եղել X նշանի, մյուս դեպքում / նշանի միջոցով), սակայն երկու քվեաթերթիկներն էլ վավեր են ճանաչվել տեղամասային հանձնաժողովի անդամների քվեարկությամբ, երկու քվեաթերթիկներն էլ քվեարկված են եղել ՀՀ-ի օգտին:

13.3. Տեղամասային հանձնաժողովի անդամներից մի քանիսը (4 անդամ) 14:00-ից սկսած մինչև 17:00 ընկած ժամա-

նակահատվածում պարբերաբար ընդմիջման նպատակով դուրս են եկել (մինչև 20 րոպե տևողությամբ) քվեարկության սենյակից: Ընդ որում, ընդմիջման համար հյուրասիրությունը, ըստ հանձնաժողովի անդամներից մեկի, ապահովել է ՀՀԿ-ն: Հանձնաժողովի անդամների հետ ընդմիջմանը մասնակցել է նաև «Հայք» կազմակերպության և այլ կազմակերպության երկու դիտորդները (հյուրասիրություն առաջարկվել է նաև ԻԵՄ դիտորդին, որը հրաժարվել է հյուրասիրությունից): Հանձնաժողովի անդամների բացակայության ժամանակ արձանագրվել են կուտակումներ և քվեարկության բնականոն ընթացքի խաթարումներ: Մի դեպքում, երբ քվեարկության սենյակից բացակայել է նաև հանձնաժողովի քարտուղարը, երկու անձ մտել են քվեախցիկ՝ քվեարկելու: Նախագահն այդ պահին շրջված է եղել, երբ դիտորդը հրավիրել է վերջինիս ուշադրությունը փաստի վրա, երկու ընտրողները առանձնացել են միմյանցից:

13.4. Ամփոփման նիստի ավարտից և տեղամասային կենտրոնից դուրս գալուց հետո ողջ օրը քվեարկության սենյակում ներկա գտնված հասարակական կազմակերպության դիտորդը հայտնել է ԻԵՄ դիտորդին, որ ՀՀԿ-ից է և պարզապես կրել է համապատասխան կազմակերպության դիտորդի վկայական: Իսկ «Հայք» կազմակերպության դիտորդը ամբողջ օրվա ընթացքում հետևել է ԻԵՄ դիտորդի բոլոր քայլերին տեղամասում և տեղամասին հարող տարածքում:

● **14. Դիտորդ Ա.Լ.-ն թիվ 8/43 տեղամասում դիտարկել է հետևյալ խախտումները.**

14.1. Ժամը 9:00-ի սահմաններում Երևանի ավագանու թեկնածու Արթուր Ասոյանը իր երեք վստահված անձանց հետ միասին գտնվել է տեղամասային կենտրոնում: Վերջինս պատճառաբանել է դա նրանով, որ բաշխում է վստահված անձանց ընտրական տեղամասերով:

14.2. Երևանի ավագանու թեկնածու Արթուր Ասոյանը պարբերաբար եկել է տեղամասային կենտրոն: ՀՀԿ վստահված անձը Արթուր Ասոյանին է ներկայացրել ինչ-որ տվյալներ՝ քվեարկության եկած քաղաքացիների վերաբերյալ: Բացի դրանից, վստահված անձը պարբերաբար հեռախոսով տվյալներ է հաղորդել ընտրողների մասին: Ժամը 18:00-ի սահմաններում Արթուր Ասոյանը կրկին եկել է տեղամասային կենտրոն, Հանձնաժողովի նախագահը տեղամասային կենտրոնում չի եղել: Հանձնաժողովի քարտուղարն այդ ժամանակ մոտեցել է դիտորդին և հայտնել, որ թեկնածուն իրավունք ունի ներկա գտնվելու տեղամասային կենտրոնում:

14.3. Քվեարկողը դուրս է եկել քվեախցիկից՝ առանց քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելու: Հանձնաժողովի նախագահը, պատճառաբանելով, որ ընտրողի ձեռքը վնասված է և նա չի կարող ինքնուրույն քվեաթերթիկը դնել քվեարկության ծրարի մեջ, ինքն է դա արել քվեարկողի փոխարեն: Այնուամենայնիվ, դիտորդն արձանագրել է, որ քվեարկողը հենց այդ վնասված ձեռքով էլ ստորագրել է ընտրողների ցուցակում իր անվան դիմաց և կատարել քվեարկություն:

14.4. Քվեարկության արդյունքերի ամփոփման նիստի ընթացքում քվեաթերթիկների հաշվարկի ժամանակ դիտորդն արձանագրել է, որ թվով 49 քվեաթերթիկների վրա նշումը կատարված է եղել կարմիր գրիչով: Բոլոր այս քվեաթերթիկները քվեարկված են եղել ՀՀԿ-ի օգտին:

● **15. Դիտորդ Մ.Ս.-ն թիվ 8/08 և 8/09 տեղամասերում դիտարկել է հետևյալ խախտումները.**

15.1. Ներկա գտնվելով քվեարկության արդյունքների ամփոփման նիստին և վերցնելով տեխնիկական սարքերով տպված վերջնական տեղեկանքի իր օրինակը՝ դիտորդը դուրս է եկել տեղամասից. Տեղամասի մուտքի մոտ դի-

տորոգ ալանատես է եղել, որ «Երկիր ծիրանի» կուսակցության կողմից որպես ավագանու թեկնածու առաջադրված Սոնա Աղեկյանին և Մնացական Պարսկշիկին թույլ չեն տվել մուտք գործել 8/08 և 8/09 տեղամասեր և ներկա գտնվել քվեարկության արյունքների ամփոփման նիստին:

• **16. Դիտորդ Մ.Փ.-ն թիվ 2 տարածքային ընտրական հանձնաժողովում տեղամասերից ստացված ահազանգների հիման վրա արձանագրել է հետևյալ խախտումները.**

16.1. Թիվ 2/12 տեղամասում ժամը 15:00-ի սահմաններում ՀԱԿ խմբակցության հանձնաժողովի անդամը կարճատև ժամանակով բացակայել է տեղամասից, իսկ վերադառնալուն պես հայտնաբերել, որ հանձնաժողովի կազմում տեղի է ունեցել փոփոխություն, որի արդյունքում վերջինս արդեն հանձնաժողովի անդամ չի հանդիսանում: Դեպքի մասին ահազանգ է կատարվել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ: Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը այցելել է տեղամաս: Դեպքը գրանցվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

16.2. Թիվ 2/47 տեղամասից օրվա ընթացքում պարբերաբար ստացվել են ահազանգեր՝ կապված տեխնիկական սարքավորման հաճախակի խափանումների հետ:

16.3. 15.05.2017թ. ժամը 12:30-ի սահմաններում թիվ 2/53 տեղամասից ստացված պարկին կից չեն ներկայացվել ընտրողների ստորագրված ցուցակները: Վերջիններս հայտնաբերվել են պարկի մեջ:

16.4. ժամը 01:00-ի սահմաններում թիվ 2/7 տեղամասից ստացված պարկը եղել է բացված, առհասարակ կնքված և ստորագրված չի եղել:

• **17. Դիտորդ Հ.Հ.-ն թիվ 5 տարածքային ընտրական հանձնաժողովում դիտարկել է հետևյալ խախտումները.**

17.1. Քվեարկության ամփոփման նիստի ավարտից հետո, երբ պարկերը բերում էին տեղամասային ընտրական հանձնաժողովից Տարածքային ընտրական հանձնաժողով, թիվ 5/14 և 5/15 տեղամասային ընտրական հանձնաժողովների պարկերից հանվել են փոքր պարկերը և տեղադրվել առանձին՝ պահարանի մեջ, այնուհետև մեծ պարկերը կապարակնքվել են: Նշված խախտումների վերաբերյալ կազմվել է արձանագրություն:

17.2. Թիվ 5/10 տեղամասային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրության ելակետային թվերը և էլեկտրոնային սարքի միջոցով տպված կտրոնի թվերը չեն համապատասխանել:

• **18. Դիտորդ Կ.Ա.-ն թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողովում արձանագրել է հետևյալ խախտումները:** Մասնակցելով հանձնաժողովի կողմից ժամը 15:00-ին հրավիրված նիստին՝ դիտորդը ցանկացել է ձայնագրել նիստը, հանձնաժողովի նախագահը հարցրել է դիտորդին՝ արդյոք վերջինս ձայնագրում է թե ոչ, ինչին ի պատասխան դիտորդը պատասխանել է՝ «այո», այնուհետև հանձնաժողովի նախագահը հարցրել է, թե արդյոք դիտորդ ունի ձայնագրելու իրավունք, ինչին ի պատասխան դիտորդը դարձյալ պատասխանել է, որ «այո» ունի տվյալ նիստը ձայնագրելու իրավունք: Դիտորդի պատասխանից նախագահը շփոթմունքի մեջ է ընկել, իսկ հանձնաժողովի այլ անդամներ պահանջել են ձայնագրել նիստը: Խուսափելու համար հետագա անախորժություններից՝ դիտորդը պատասխանել է, որ այլևս չի ձայնագրում: Այնուհետև հանձնաժողովի կին անդամներից մեկը ձեռքը մեկնել է դիտորդին՝ պահանջելով հեռախոսը: Նույն պահին դիտորդի ենթադրությամբ քարտուղարը վերոնշյալ հանձնաժողովի անդամին բարձրաձայն ասել է, որ վերջինս վերցնի

հեռախոսը, ինչի արդյունքում դիտորդը վախեցած հանձնաժողովի քարտուղարի բղավոցներից հեռախոսը հանձնել է վերոնշյալ հանձնաժողովի անդամին: Նշված անձը վերցնելով հեռախոսը համոզվել է, որ ձայնագրվում է, և սպառնացել է՝ ասելով հետևյալ արտահայտությունները. «գիտես քո նման քանի մուկ եմ բռնել, կտամ հեռախոսիդ հետ գլուխդ կջարդեմ, էս ով ա արա»: Դիտորդի պահանջից հետո հեռախոսը վերադարձվել է իրեն, ինչից հետո դիտորդը ստուգել և տեսել է, որ ձայնագրությունը ջնջվել է: Դիտորդի պնդմամբ ձայնագրությունը ջնջվել է կամ քարտուղարի կողմից կամ սենյակում ներկա գտնվող երկու տղաներից մեկի կողմից, որոնք գտնվել են սենյակում և տարբերանշան չեն կրել և որոնցից մեկը դիտորդի հետ խոսակցության ընթացքում հաստատել է, որ հանձնաժողովի հետ որևէ կապ չունի և որոնց էլ վերջինս(քարտուղարը) դիմել է հարցնելով, թե ինչպես կարելի է ձայնագրությունը անջատել: Ժամը 3:36-ի սահմաններում դեպքի մասին «Իրավունքի եվրոպա միավորում» ԻՀԿ-ի կողմից ահազանգվել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի թեժ գիծ: Պաշտպանի աշխատակազմի բանավոր հարցմանն ի պատասխան հանձնաժողովի կողմից հայտնվել է, որ դիտորդն այս պահին կարող է գալ ձայնագրել, պարզապես նա փորձել է գաղտնի ձևով ձայնագրել, ինչը չի համապատասխանում իրականությանը: Իսկ սպառնալիքների կապակցությամբ ՄԻՊ-ի աշխատակազմի կողմից առաջարկվել է դիմել իրավապահ մարմիններին: Երբ դիտորդը ՄԻՊ-ին ահազանգելուց հետո 5 րոպեի տարբերությամբ վերադարձել է նիստերի սենյակ, այն արդեն ավարտված է եղել, ինչի արդյունքում դիտորդը գրկվել է նիստը դիտարկելու հնարավորությունից:

- 19. «Իրավունքի եվրոպա միավորում» ՀԿ-ն բողոք է ներկայացրել նաև «Ազատություն TV»-ի հրապարակած (https://web.facebook.com/azatutyun/videos/1527510977294274/?autoplay_reason=gatekeeper&video_container_type=4&video_creator_

product_type=0&app_id=165907476854626&live_video_guests=0&rdc=1&rdm=1) տեսանյութում արձանագրված խախտման կապակցությամբ: Համաձայն այդ տեսանյութի՝ ՀՀԿ-ի շտաբում (Աճառյան 23) գումար են բաժանել քաղաքացիներին: Չարուհի Փոստանյանը հայտարարել է, որ ՀՀԿ-ի շտաբում առկա են կազմված ցուցակներ, և որ գումարներ են բաժանվում քաղաքացիներին: ՀՀԿ-ի շտաբին հարակից 2 տեղամասում ընդհանուր առմամբ քվեարկությանը մասնակցել է 1742 ընտրող:

1/6 (Աճառյան 15) տեղամասում քվեարկության իրավունք ունեցող անձանց թիվը՝ 1873, մասնակիցների թիվ՝ 1005

1.20 (Ծարավ Աղբյուր 55ա) տեղամասում քվեարկության իրավունք ունեցող անձանց թիվը՝ 1518, մասնակիցների թիվ՝ 737

- 20. «Իրավունքի եվրոպա միավորում» ՀԿ-ն բողոք է ներկայացրել նաև (<https://www.youtube.com/watch?v=qL9TYlEtMrk&app=desktop.e.com/watch?v=qL9TYlEtMrk&feature=share>) տեսանյութում արտացոլված խախտումների կապակցությամբ, որի համաձայն՝ «Ազատության» լրագրողը Կոնդ թաղամասում գտնվող ՀՀԿ-ի շտաբում բացահայտել է ընտրակաշառքի բաժանման դեպքեր: Այդ թաղամասում տասնյակ քաղաքացիներ ընտրատեղամաս գնալուց առաջ անձնագրերով, մի խումբ մարդկանց ուղեկցությամբ, այցելել են ՀՀԿ-ի նախընտրական շտաբ: Կաշառքի բաժանման ազդեցության գոտում գտնվող ընտրական տեղամասերը 8-են եղել, իսկ ընտրողների մոտավոր թիվը՝ 5279:
 - 1) 9/18 տեղամասում քվեարկության իրավունք ունեցող անձանց թիվը 1665 է, մասնակիցների թիվը՝ 785
 - 2) 9/19 տեղամասում քվեարկության իրավունք ունեցող անձանց թիվը 1774 է, մասնակիցների թիվը 671

- 3) 9/20 տեղամասում քվեարկության իրավունք ունեցող անձանց թիվը 931 է, մասնակիցների թիվը 411
- 4) 9/21 տեղամասում քվեարկության իրավունք ունեցող անձանց թիվը 1829 է, մասնակիցների թիվը 661
- 5) 9/22 տեղամասում քվեարկության իրավունք ունեցող անձանց թիվը 2024 է, մասնակիցների թիվը 603
- 6) 9/23 տեղամասում քվեարկության իրավունք ունեցող անձանց թիվը 1546 է, մասնակիցների թիվը 505
- 7) 9/28 (Ռուսթավելու 14) տեղամասում քվեարկության իրավունք ունեցող անձանց թիվը՝ 1816, մասնակիցների թիվ՝ 862
- 8) 9/29 (Ռուսթավելու 14) տեղամասում քվեարկության իրավունք ունեցող անձանց թիվը՝ 1499, մասնակիցների թիվ՝ 781

3. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ

Ներկայացված բոլոր դիմում-բողոքների հիման վրա վարչական վարույթի հարուցումը մերժվել է համապատասխան ՏԻՄ-երի կողմից մասնակի կամ ամբողջությամբ:

Բոլոր 10 ՏԸՀ-ներ ներկայացրած 19 դիմում-բողոքներով ՏԸՀ-ները մերժել են «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության մասով վարչական վարույթի հարուցումը կամ մերժել են ԻԵՄ-ի կողմից ներկայացված դիմում-բողոքները:

Ինչ վերաբերում է դիտորդների անունից ներկայացրած դիմում-բողոքներին, ապա ներկայացված 17 դիմում-բողոքներից 3-ով թիվ 2, 3, 4, 6 և 7 ՏԸՀ-ները գտել են, որ թիվ 2/12, 3/25, 4/01, 4/06, 6/3, 7/29, 7/33 տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահները թույլ են տվել ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի պահանջների խախտում և միջնորդել ԿԸՀ-ին՝ ուժը կորցրած ճանաչել տվյալ տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներ Արսեն Վարդանի Պողոսյանի, Վանիկ Արտաշի Մանվելյանի, Արշակ Պետրոսի Արզիկյանի, Դոնարա Շահենի Աղաջանյանի, Գայանե Հրանտի Լոբյանի, Հովսեփ Տիգրանի Ղազարյանի, Վարդան Ռաֆիկի Վարդանյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկելու որակավորման վկայականները:

Թիվ 9 ՏԸՀ-ն 1 դիմում-բողոքում ներկայացված հանգամանքների կապակցությամբ դիմում բողոքն ուղարկել է ՀՀ ոստիկանություն:

Թիվ 7 ՏԸՀ-ն ճանաչել է երկու դիտորդի մասով նրանց սուբյեկտիվ ընտրական իրավունքի խախտում՝ դիտորդների գնահատականը գրանցամատյանում չգրանցելու մասով:

Դիտորդների անունից ներկայացրած դիմում-բողոքներով բողոքարկված 11 խախտումների մասով դիմում-բողոքները մերժվել են ՏԸՀ-ների կողմից:

Դիտորդների անունից ներկայացրած մնացած դիմում-բողոքներով մերժվել է վարչական վարույթի հարուցումը:

4. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

Մինչև 21.05.2017թ.՝ Երևանի ավագանու ընտրությունների ամփոփումը, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից Երևանի ավագանու ընտրությունների արդյունքների ամփոփման նիստը ԻԵՄ-ին հաջողվել է ձեռք բերել բոլոր ՏԸՀ որոշումները և 15 բողոք ներկայացնել բոլոր 10 ՏԸՀ-ների կողմից կայացված որոշումների դեմ: Դրանից հետո ներկայացվել է ևս 2 դիմում-բողոք:

ՏԸՀ-ների որոշումների դեմ բողոքներ են ներկայացվել Կենտրոնական ընտրական հանձնաժողով պահանջելով.

1. Մասնակի անվավեր ճանաչել համապատասխան մասով տարածքային ընտրական հանձնաժողովների համապատասխան որոշումները,
2. Ձեռնարկել միջոցներ՝

ա) վերագրյալ խախտումների կապակցությամբ արդյունավետ քննության և օրենսդրությամբ սահմանված միջոցների ձեռնարկման ուղղությամբ.

բ) խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատու անձանց օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ.

գ) համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք ըստ հնարավորության, վերացնելու ուղղությամբ:

3. Հիմքերի առկայության դեպքում, այդ թվում՝ քրեաիրավական բնույթի խախտումները վերահասցեագրել ըստ ենթակայության.
4. Քննարկել և գնահատել հիշյալ խախտումների ազդեցությունը նշված տեղամասերում քվեարկության արդյունքների վրա:

Ներկայացված բոլոր դիմում-բողոքների հիման վրա վարչական վարույթի հարուցումը մերժվել է մասնակի կամ ամբողջությամբ:

5. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ՏԸՀ-ների, ինչպես նաև ԿԸՀ-ի որոշումների դեմ ներկայացվել է թվով 13 հայցադիմում:

Նշված հայցերի հիման վրա հարուցված վարչական գործերից 4-ով ՀՀ վարչական դատարանը կայացրել է գործն ըստ էության լուծող դատական ակտ: Հայցադիմումներից երեքը (թիվ ՎԴ/5392/05/17, ՎԴ/ 5384/05/17 և ՎԴ/5389/05/17 վարչական գործերով) ամբողջությամբ մերժվել են: Վարչական դատարանի այս երեք վճիռների դեմ ներկայացվել են վերաքննիչ բողոքներ: Հայցադիմումներից մեկը (թիվ ՎԴ/5396/05/17 վարչական գործով) մասով բավարարվել է վարչական դատարանի կողմից: Հայցադիմումի չբավարարված մասով ներկայացվել է վերաքննիչ բողոք: Դատարանի կողմից մյուս բոլոր գործերի քննությունը դեռ ընթացքի մեջ է:

Դատարանները երեք վարչական գործերի (թիվ ՎԴ/5392/05/17, ՎԴ/ 5384/05/17 և ՎԴ/5389/05/17) շրջանակներում անդադարնալով հայցադիմումների հիմքերին և հիմնավորումներին դրանք համարել են անհիմն, իսկ որոշ հիմնավորումներ նույնիսկ քննության առարկա չեն դարձվել:

Դատարանը, թիվ ՎԴ/5392/05/17 գործով անդրադառնալով հասարակական կազմակերպության որպես ընտրական իրավունքների պաշտպանությանը ՀՀ վարչական դատարան դիմող սուբյեկտի (իրավասուբյեկտության) հարցին, եզրահանգել է, որ հասարակական կազմակերպությունը իրավասու չէ ՀՀ ընտրական օրենսգրքով անմիջականորեն իրեն չվերաբերող իրավունքների պաշտպանության նպատակով բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը կամ գործողությունը (անգործությունը): Վճիռներով արձանագրվել է, որ հասարակական կազմակերպությունն ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել միայն ՀՀ ընտրական օրենսգրքով անմիջականորեն հենց իրեն վերաբերող իրավունքների (դիտորդի հավատարմագրման) մասով:

Դատարանն, անդրադարձ չկատարելով և քննության առարկա չդարձնելով հայցադիմումի մյուս հիմքերն ու հիմնավորումները, մասնավորապես այն, որ տարածքային ընտրական հանձնաժողովները որոշումները կայացրել են ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ՝ 19.05.2017թ.՝ ստեղծելով դրանք ԿԸՀ բողոքարկելու անհնարինություն, կամ, որ ՏԸՀ-ի և ԿԸՀ-ի կողմից չի գնահատվել խախտումների ազդեցությունը քվեարկության արդյունքների վրա, փաստել է, որ դրանք ըստ էության չունեն որևէ իրավական և փաստական հիմք:

Մեկ այլ գործով (թիվ ՎԴ/5384/05/17) թեկուզ քննարկման առարկա է դարձվել տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից որոշումներն ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ կայացվելու հարցը, սակայն ըստ էության քննարկման առարկա չի դարձվել ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ որոշումներ կայացնելու իրավական բացասական հետևանքները, այլ ընդհամենը հիմնավորվել է, որ օրենքով սահմանվել են տարածքային և Կենտրոնական ընտրական հանձնաժողովների կողմից դիմումներին պատասխանելու և որոշումներ ընդունելու առավելագույն ժամկետներ, որոնց սահմաններում էլ կայացվել են որոշումները: Այսինքն՝ Դատարանի կողմից չի գնահատվել հիշյալ կանոնակարգման արդյունքում բողոք բերելու իրավունքի իրականացման փաստացի հնարվորությունը՝ դրա վերացումը:

Թիվ ՎԴ/5389/05/17 ՎԴ/5396/05/17 գործերով դատարանները, անդրադառնալով տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու՝ օրենքով նախատեսված հիմքերին, գտել են, որ գործող ընտրական օրենսգրքի կանոնակարգումների համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված յուրաքանչյուր խախտման համար առանձին վարույթ չի իրականացվում. տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումները համակարգային ուսումնասիրության են ենթարկվում տարածքային ընտրական հանձնաժողովի նիստում և ընտրությունների վրա ազդեցության իմաստով իրենց գնահատականն են ստանում համապատասխան որոշման մեջ: Ադայիսով՝ դատարանը խուսանավել է թե սուբյեկտիվ, թե օբյեկտիվ ընտրական իրավունքների խախտումների հիմքով դիտորդների կողմից ներկայացված խախտումների վերաբերյալ ՏԸՀ-ի և ԿԸՀ-ի արտահայտած դիրքորոշումները մեկնաբանելուց, ինչպես նաև հայցադիմումի հիմնավորումների լույսի ներքո գնահատական տալուց:

Ուշագրավ է, որ թիվ ՎԴ/5389/05/17 գործով դատարանը, անդրադառնալով հասարակական կազմակերպության՝ իրավունքների պաշտպանության սուբյեկտ հանդիսանալու հարցին, հարցը քննարկելու և իրավական դիրքորոշում հայտնելու փոխարեն խուսափողական դիրքորոշում է հայտնել՝ արձանագրելով, որ եթե այդ հասարակական կազմակերպությունը դիտարկվեր որպես իր դիտորդների իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու իրավունքով օժտված սուբյեկտ, այդուհանդերձ, քննարկվող դեպքում դա չէր ազդելու խնդրահարույց որոշումների եզրափակիչ՝ «որոշեց» մասի վրա, քանի որ կազմակերպությունների պարագայում ևս վարույթ չհարուցելու որոշումն իրավաչափ էր լինելու, այնուհետև արձանագրել է, որ նման պայմաններում դատարանը չի անդրադառնում հասարակական կազմակերպության իրավունքների պաշտպանության սուբյեկտ հանդիսանալու հայցվորների հիմնավորումներին:

Թիվ ՎԴ/5389/05/17 և ՎԴ/5396/05/17 գործերով դատարանը, քննարկման առարկա դարձնելով տարածքային ընտրական հանձ-

նաժողովների կողմից որոշումները ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ կայացնելու հարցը, նույն դիրքորոշումն է հայտնել, ըստ որի՝ օրենքով սահմանվել են տարածքային և Կենտրոնական ընտրական հանձնաժողովների կողմից դիմումներին պատասխանելու և որոշումներ ընդունելու առավելագույն ժամկետներ, որոնց սահմաններում էլ կայացվել են որոշումները:

Թիվ ՎԴ/5396/05/17 գործով դատարանը համարել է, որ ՏԸՀ և ԿԸՀ որոշումները ոչ իրավաչափ են «Իրավունքի Եվրոպա միավորում» հասարակական կազմակերպության սուբյեկտիվ իրավունքի խախտման հարցին չանդրադառնալու մասով այն հիմնավորմամբ, որ կազմակերպության դիտորդի սուբյեկտիվ իրավունքների խախտումն ուղղակիորեն շրջափում է այդ կազմակերպության սուբյեկտիվ իրավունքները և այս առումով կազմակերպությունը պետք է օժտված լինի պետական մարմիններում իր կամ իր դիտորդի իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու իրավունքով: Հակառակ մեկնաբանությունը, այսինքն՝ սուբյեկտին (կազմակերպությանը) դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքով օժտելը, միաժամանակ նրան զրկելով այն պաշտպանելու հնարավորությունից, երևակայական կդարձնի այդ իրավունքը:

6. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ.

ՀՀ վարչական դատարանի կողմից կայացված վճիռների դեմ բերվել են վերաքննիչ բողոքներ: Երեք գործերով վճիռները բողոքարկվել են ամբողջությամբ, իսկ մեկ գործով՝ մասնակի:

Վերաքննիչ բողոքները ներկայացվել են հետևյալ հիմնավորումների շրջանակներում.

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների (անգործության) ոչ իրավաչափությունը, ՏԸՀ և ԿԸՀ որոշումներով՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից արձանագրված օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների կապակցությամբ անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելը և ՏԸՀ և ԿԸՀ որոշումներով վարչական վարույթի հարուցումը մերժելը հանգեց-

նում է դիտորդների օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտմանը այն հիմնավորմամբ, որ ընտրելու իրավունքով օժտված յուրաքանչյուր անձ պետք է ունենա նաև այս իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց: Հետևաբար այն դեպքում, երբ ընտրական տեղամասում դիտորդի կողմից արձանագրված ընտրախախտումների կանխարգելման, վերացման կամ այլ անհրաժեշտ գործողությունների իրականացման նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը չի ձեռնարկում անհրաժեշտ միջոցներ, խախտվում են նաև համապատասխան դիտորդի և դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության ընտրական իրավունքները: Իսկ վարչական վարույթի հարուցումը մերժելը անմիջական իրավունքների խախտման բացակայության, անձնական շահագրգռվածության հիմնավորմամբ ոչ իրավասու սուբյեկտ հանդիսանալու մասով ևս ոչ իրավաչափ է, քանի որ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքները՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ, ենթակա են քննության վարչական վարույթի կարգով, նույն կարգով, ինչ դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումները:

ՏԸՀ որոշումները ոչ իրավաչափ են, քանի որ դրանք կայացվել են ընտրությունների արդյունքների ամփոփումից ընդամենը մեկ օր առաջ՝ զրկելով բողոքաբերներին ՏԸՀ որոշումները մինչև ընտրությունների արդյունքները ամփոփելը ԿԸՀ բողոքարկելու իրական հնարավորությունից, այսինքն՝ բացառվել է ՏԸՀ որոշումների դեմ ներկայացված բողոքները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը քննելու և արդյունքների ամփոփման շրջանակներում այն գնահատելու հնարավորությունը:

Հասարակական կազմակերպության կողմից օբյեկտիվ ընտրական իրավունքների խախտումների վերաբերյալ դիմում-բողոքներ ներկայացնելու իրավասուբյեկտ հանդիսանալու հանգամանքը բխում է actio popularis բողոքների ինստիտուտից, որից բխում է, որ այլ անձանց խախտված իրավունքների համար դատարան կամ այլ մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմելու իրավունքի իրացման հնարավորություն պետք է ունենան այն հասարակական

կազմակերպությունները, որոնց նպատակներից են կոլեկտիվ կամ համայնքային կոնկրետ շահերի պաշտպանությունը:

ՏՈՀ և ԿՀԸ որոշումները ոչ իրավաչափ են նաև այն հիմնավորմամբ, որ ձևականորեն կայացնելով վարույթի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշում, իրականում հանձնաժողովի կողմից կայացվել է ըստ էության որոշում՝ առանց վարչական վարույթ հարուցելու: Բողոքարկման սուբյեկտ լինելու հանգամանքի իրավական գնահատականը չէր կարող հանձնաժողովի քննարկման առարկա դառնալ վարչական վարույթ հարուցելու փուլում, ինչի արդյունքում խախտվել է դիմումատուների պատշաճ վարչարարության իրավունքը:

Այն դիրքորոշումը, ըստ որի՝ դիմում-բողոքում ներկայացված փաստական հանգամանքները, որոնք ներկայացված են եղել նաև համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում, ուսումնասիրվել և գնահատել է վերջիններիս ազդեցությունը քվեարկության արդյունքների վրա, չի կարող ազատել իրավասու մարմիններին այդ դիմում-բողոքներով ներկայացված խախտումների վերաբերյալ քննություն չիրականացնելու պարտականությունից, քանի որ հայցվորների կողմից ներկայացված դիմում-բողոքներով արձանագրված խախտումները ենթակա են եղել քննության իրենց դիմում-բողոքների հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում՝ այդ վարույթներին մասնակից դարձվելու պայմաններում: Իսկ դիմում-բողոքներով ներկայացված խախտումների առանձին ուսումնասիրությունն ու «քննություն»-ը, ինչպես նաև գրանցամատյանում կատարված գրառումների ուսումնասիրությունը չի կարող փոխարինել տարածքային հանձնաժողովի կողմից իրականացման ենթակա վարույթը և այդ որոշումների գոյությունը չի կարող օգտագործվել որպես փաստարկ վիճարկվող որոշման իրավաչափության գնահատման տեսանկյունից: